Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-117[6]-13.12.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գործատուների միությունների մասին» 2007 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-115-Ն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գործատուների միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-117-13.12.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ, «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություն	«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Կուսակցությունների մասին» օրենքի 35-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում առաջարկում ենք բացառել «ՀՀ» հապավման կիրառումը: Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ, «Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածներով նախատեսված փոփոխություններին:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են փոփոխություն:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված			
2.	*ՀՀ կառավարություն*	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում հղում է կատարվում Օրենսգրքին: Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին հղում կատարելիս գրել կրճատ անվանումը կամ առաջին իսկ կիրառումից հետո սահմանել կրճատ տարբերակ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
3.	*ՀՀ կառավարություն*	«Հիմնադրամների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ նկարագրված խնդրի լուծման նպատակով նպատակահարմար է նույնական փոփոխություն կատարել նաև «Հիմնադրամների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3.1-ին մասում:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
4.	*ՀՀ կառավարություն*	«Գործատուների միությունների մասին» օրենք	Նախագծերի փաթեթի ընդունմամբ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել «Գործատուների միությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասում:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է փոփոխություն: Նախագծով առաջարկվել է «Գործատուների միությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Գործատուների միության լուծարման դեպքում նրա գույքն ուղղվում է միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության:»:	Ընդունվել է: